ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«29» հունվարի 2026 թվականի N 3113 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿԵՄԲԵՐԻ 15-ԻՑ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ը ՆԵՐԱՌՅԱԼ ԱՃՈՒՐԴ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2026 թվականի մայիսի 11-ի N 23-Լ հրամանով հաստատված ուղեցույցի «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2026 թվականի հուլիսի 15-ի N 127-Ա որոշումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքերը էլեկտրոնային համակարգի միջոցով աճուրդով օտարելու համար հայտարարել աճուրդ, որը կկայանա 2026 թվականի դեկեմբերի 15-ից մինչև դեկտեմբերի 18-ը ներառյալ, համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026 թ. ք.Գյումրի

Հավելված՝
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Գյումրի համայնքի ղեկավարի
2026 թվականի հոկտեմբերի 29
N 3113-Ա որոշման

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Գյումրի համայնքը հրավիրում է աճուրդի, որը տեղի կունենա 2026 թվականի դեկեմբերի 15-ի ժամը 11^{00}-ից մինչև դեկտեմբերի 18-ի ժամը 11^{00} ներառյալ: https:/ /www.e-auctions.am կայքի միջոցով:

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

Հայաստանի Հանրապետության Գյումրի համայնքի ավագանու 2026 թվականի հուլիսի 15-ի N 127-Ա որոշման համաձայն օտարման ենթակա ներքոհիշյալ անշարժ գույքը

Լոտի հերթական համարը	Գույքի (լոտի) գտնվելու վայրը (հասցե)	Լոտի կադաստրային ծածկագիրը	Շինության ընդհանուր մակերեսը (քառ.մ.)	Հողամասի ընդհանուր մակերեսը (քառ.մ.)	Անշարժ գույքի գնահատված արժեքը (ՀՀ դրամ)	Լոտի մեկնարկային գինը (ՀՀ դրամ)	Նախավճարի չափը (ՀՀ դրամ)
1.	Հ. Շիրազի փողոց N 30/3	08-001-0751-0036	1207,83	434,02	62 275 300	113 000 000	

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Գյումրու համայնքապետարան /հասցեն՝ ք.Գյումրի, Վարդանանց հր. 1, 0312 2.22.29/: համայնքապետարանում /Վարդանանցիր. 1/, ինչպես նաև Գյումրու համայնքապետարանի ինտերնետային կայքում՝ www.gyumricity.am:

Աճուրդին մասնակից կարող են հանդիսանալ ֆիզիկական և իրավաբանական անձիք (բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի), ովքեր վաճառվող լոտի նկատմամբ կարող են ունենալ սեփականության իրավունք

- Էլեկտրոնային համակարգում մասնակիցների գրանցումն իրականացվում է առցանց եղանակով (www.e-auctions.am) էլեկտրոնային համակարգում, գրանցումը իրականացվում է ՀՀ կառավարության 2023թվականի սեպտեմբերի 28-ի N1667-Ն որոշմամբ սահմանված հավելվածի:
- Աճուրդի մասնակցության համար էլեկտրոնային համակարգում (www.e-auctions.am) գրանցվելուց և մուտք գործելուց հետո e-payments համակարգի միջոցով ՀՀ կառավարության 2023թվականի սեպտեմբերի 28-ի N1667-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 18-րդ կետով սահմանված ժամկետի ավարտից առնվազն 5 րոպե առաջ վճարել նախավճարը:
- Էլեկտրոնային աճուրդի հաղթող է ճանաչվում ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը: Հաղթողը որոշվում է համակարգի միջոցով:
- Էլեկտրոնային աճուրդի հաղթող մասնակիցն ստորագրված արձանագրությունն ու պահանջվող փաստաթղթերը աճուրդի կայացման օրվանից մինչև հաջորդ աշխատանքային օրվա ավարտը առցանց եղանակով փոխանցում է կազմակերպիչին, արձանագրությունն ստորագրելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում հաղթողը պարտավոր է փոխանցել լոտի գինը ամբողջությամբ՝ հաշվանցելով նախավճարը՝ 900215301574 հաշվեհամարին:

ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ